ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀՎՊ-ԲԸԱՀԱՊՁԲ-15/11

ք. Երևան 21.04.2017 թ.

ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմը, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա, ի դեմս Աշխատակազմի ղեկավար Ա. Ներսիսյանի, (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Հաղթանակ 2000» ՍՊԸ, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, ի դեմս տնօրեն Ա. Դանիելյանի, (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, (միասին՝ Կողմեր)կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տնտեսական ապրանքների և կենցաղային նյութերի/այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

## 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տույժերը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհապաղ փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտված է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է`

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը` Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան` Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան` Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք` Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող` ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան` պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է` 1415590(մեկ միլիոն չորս հարյուր տասնհինգ հազար հինգ հարյուր իննսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ` դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա` Պայմանագրի վճարման ժամանակացույցով` հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով` վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափը: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա

վճարումն նույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20.12. 2017 թ.:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները,

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 3 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերի ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում նախատեսվել են ֆինանսական միջոցներ և կնքվել համաձայնագիր:*

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնված Ապրանքի ծավալների կամ ծառայության Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Եթե Պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կամ համախմբված անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում[2]:

9.6 Եթե Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[3]:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները այլ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքին ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությանն անհրաժեշտ է ծառ բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.9 Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ *կատարելու հիմքով սույն պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը* պատվիրատուն,«Իրավաբանական հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ծանուցումն ուղարկվում է պայմանագիր կնքած անձի պաշտոնական էլփոստի հասցեով և միաժամանակ, նույն օրը հրապարակվում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Սույն

---

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, պայմանագիր կնքած անձը համարվում է պատշաճ իրազեկված՝ ծանուցումը, սույն ենթակետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.12 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան 19
ԿԳ գործառնական վարչություն
հ/հ 900011545069
ՀՎՀՀ 00061508
Աշխատակազմի ղեկավար

Ա. Ներսիսյան

-------------------------
/ստորագրություն/

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<< Հաղթանակ 2000>> ՍՊԸ
Ք.Երևան,Անդրանիկի 4/8
ՀՎՀՀ 00832885
<< Կոնվերս բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 19300 4674001
Տնօրեն Ա. Դանիելյան

-------------------------
/ստորագրություն/

Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1

21.04. 20 17 թ. կնքված

ՀՀՎՊ-ԲԸԱՁԱՊՁԲ-15/11 ծածկագրով գնման պայմանագրի

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| Անվանում | | Տեխնիկական բնութագրեր |
| 1 | օճառ ձեռքի | չորսուների, կտորների և այլ ձևերով որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս «Չեզոք և Էքստրա» տեսակների համար 78գ «Մանկական» և «Սովորական» տեսակների համար 74 գ ստղայանյութերի զանգվածային (վերահաշվարկված $Na_2O$) մասը ոչ ավելի՝ «Չեզոք» տեսակի համար բացակայում է, «Էքստրա» տեսակի համար՝ 0.2 % «Մանկական» տեսակի համար՝ 0.15% «Սովորական» տեսակի համար՝ 0.22 %, օճառից անջատված ճարպանյութերի պնդեցման ջերմաստիճանը (տիտրը) (3641) C նատրիում քլորիդի զանգվածային մասը՝ 0.4 % -ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված «N2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ»սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը ըստ ԳՕՍՏ 28546-2002 |
| 2 | օճառ հեղուկ | պլաստմասե շշերով, տարբեր գույների, 5լ տարաներով |
| 4 | Զուգարանի թուղթ ռուլոնով | Երկշերտ կամ եռաշերտ, 9.8 սմ x 12.5սմ, 150 թերթիկ, երկարությունը 18.75 մ պատրաստված գրելութղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N1546-Ն որոշմամբ հաստատված «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի SKARLET կամ համարժեք |
| 5 | թղթե անձեռոցիկ՝ երկշերտ | Երկշերտ տարբեր չափերի, թղթի 1քմ զանգվածը՝20գ., խոնավությունը՝7.0%, 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից. անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը ըստ ՀՀ կառավարության 19.10. 2006թ. թիվ 1546-Ն որոշմամբ հաստատված «Կենցաղ. և սանիտ. նշանակության թղթե և քիմ .թելերից ապրանքներին ներկայացվող տեխ. կանոնակարգի» |
| 6 | հեղուկ լվացող միջոց | ամման լվանալու հեղուկ, պլաստմասե շշերով, 0,5 կամ 1 լիտրանոց, պարունակությունը կիտրոնի,նարնջի կամ որևէ մրգի հաճելի բույրով |
| 7 | մաքրող նյութեր | լվացարանների խցանումները բացելու,մաքրելու հեղուկ,մեկ լիտրանոց շշերով, |

| | | |
|---|---|---|
| | | գույնը կարևոր չէ, /ԿՄՏՏ/ |
| 8 | վարդակ՝ երկբևեռանի | Վարդակ 1 կամ 2 տեղանոց պլաստմասե UL-94V, 1 port RJ11 բնիկով, 1 տեղանոց, մեկուսիչի էլեկտրական դիմադրությունը՝ R 1000 MOм, աշխատանքային ջերմաստիճանը՝ մինուս 30 °C-ից մինչև +80 °C, սպիտակ կամ կարմրագույն: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական |
| | | |
| 10 | էլապահովչ,միաֆազ՝ | 40Ա |
| 11 | խոզանակներ | Խոզանակ հատակը մաքրելու համար , պոչը բացվող, փակված վիճակում 90սմ երկարությամբ, մզվող սպունգով (սպունգի չափսի տրամագիծը 20 սմ, երկարությունը 27 սմ) |
| | | |
| 13 | տնտեսող լամպեր | Խողովակաձև, ուղիղ կամ օղակաձև ձևն-13 (սովորական) տիպի 20 և 40 վտ, 50hz «Քամելեոն», դեղին գույնի կոթառը E27 |
| 14 | տնտեսող լամպեր | Խողովակաձև, ուղիղ կամ օղակաձև ձևն-13 (սովորական) տիպի 20 և 40 վտ, 50hz «Քամելեոն», դեղին գույնի կոթառը E27 |
| 15 | տնտեսող լամպեր | Խողովակաձև, ուղիղ կամ օղակաձև ձևն-13 (սովորական) տիպի 20 և 40 վտ, 50hz «Քամելեոն», դեղին գույնի կոթառը E27 |
| | | |
| 17 | ՝ Զուգարանի մաքրման նյութեր | «Ուտյոնոկ» կամ համարժեքը՝ զուգարանակոնքի մաքրող միջոց, «Տուալետնիյ ուտյոնոկ 581 մրոսկոյ» Ուկրաինայի Կիև քաղաքի «ՍԿ ՋՈՆՍՈՆ» ՍՊԸ արտադրության 0,5 կգ պլաստմասե փաթեթով ,կամ համարժեքը |
| 18 | Զուգարանի մաքրման նյութեր | , Dosia ֆիրմայի կամ«Ուտյոնոկ» , կամ համարժեքը, պլաստմասե փաթեթով 0.5-0,75 տարողությամբ |
| 19 | Հատակի մաքրելու նյութեր | մեկ լիտրանոց շշով, արտասահմանյան արտադրության, ճարպի պիտակով (Գերմանիա), «Brilliant Shien» կամ«Էմսալ»-ին կամ համարժեքը |
| 20 | Աղտահանող միջոց սանհանգույցի համար(լվանյութ) | Աղտահանող և ճարպազերծող միջոց Rakhsha- կամ համարժեք |
| 21 | Կահույքի փայլեցնող միջոց | Փայլեցնող միջոց փայտե կահույքի համար, աէրոզոլային փաթեթով «POLO» կամ համարժեք |
| 22 | հոտազերծիչ օդի | Օդի հոտավետ հոտազերծիչ աէրոզոլային փաթեթավորվածքով «Ալպիական սվեժեստ» 300 մլգ մետաղյա տարայով |
| 23 | Մաքրող կտորներ | Մաքրող կտորներ հատակի համար պատրաստված բամբակյա հումքից<br>չափսերը՝ 0,4*0,8 մ, կամ 0,5x1,0 մ մոխրագույն կամ սպիտակ |
| 24 | Փոշու հավաքման կտորներ | Փոշի մաքրելու գործվածքներ տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից |
| 25 | Մեկուսիչ ժապավեն ՝ օղակաձև | Գլանաձև, ինքնակպչուն, էլ. լարերի մեկուսացման համար (իզոլենտ |

| | | |
|---|---|---|
| 26 | Պոլիէթիլենային պարկ` աղբի համար | 30լիտրանոց,գլանաձև փաթույթով |
| 28 | մարտկոցներ | AA տեսակի:Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար,1.5վ, AAA ալկալիական,առնվազն մեկ տարվա պիտանելիության ժամկետով: |
| | | |
| 30 | սպունգ | աման լվանալու, մի կողմը կոշտ մակերեսով, չափսը` 60մմ*80*30մմ գույնը` դեղնավուն կամ սպիտակ |
| 31 | սովորական ավել | հատակ մաքրելու համար` կոթի երկարությունը 450-ից 500 |
| 33 | ձեռքի գործիքներ` սովորական, կենցաղային օգտագործման համար | մուրճ,փայտյա աղեղ , մետաղ աղեղ`, դուր, կացին,աքցան, տափակաբերան աքցան(плоскогуецы) պտուտակիչ(отвертка) երկկողմանի օգտագործման, |
| | | |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան 19
ԿԳ գործառնական վարչություն
հ/հ 900011545069
ՀՀՎՀՀ 00061508
Աշխատակազմի ղեկավար

Ա. Ներսիսյան

**ՎԱՃԱՌՈՂ**

<< Հաղթանակ 2000>> ՍՊԸ
Ք.Երևան,Անդրանիկի 4/8
ՀՎՀՀ 00832885
<< Կոնվերս բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 19300 4674001
Տնօրեն Ա.Դանիելյան

Հավելված N 2
21.04.2017 թ. կնքված
ՀՀԿԴ-ԲԸԱՀԱՊՁԲ-15/11 ծածկագրով գնման պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Չափաբաժնի համարը | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2017 թ. | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը` | Չափման միավորը | Միավորի գինը | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | |
| 1 | օճառ ձեռքի | հատ | 220 | --- | ---- | -- | -- | 120 | 26400 | 120 | 26400 |
| 2 | օճառ հեղուկ | լիտր | 475 | -- | --- | -- | -- | 30 | 14250 | 30 | 14250 |
| 4 | Զուգարանի թուղթ ռուլոնով | հատ | 140 | 100 | 14000 | 1900 | 266000 | -- | -- | 2000 | 280000 |
| 5 | Թղթե անձեռոցիկ` երկշերտ | հատ | 300 | --- | --- | -- | -- | 250 | 75000 | 250 | 75000 |
| 6 | հեղուկ լվացող միջոց | լիտր | 510 | 24 | 12240 | -- | -- | -- | -- | 24 | 12240 |
| 7 | մաքրող նյութեր | հատ | 255 | 40 | 10200 | --- | -- | -- | -- | 40 | 10200 |
| 8 | վարդակ` երկբևեռանի | հատ | 500 | 36 | 18000 | --- | -- | -- | -- | 36 | 18000 |
| 10 | Կ. ապահովիչ, միաֆազ,40Ա | հատ | 1080 | 15 | 16200 | -- | -- | -- | -- | 15 | 16200 |
| 11 | խոզանակներ | հատ | 2100 | 10 | 210000 | -- | -- | -- | -- | 10 | 21000 |
| 13 | տնտեսող լամպեր | հատ | 1700 | 120 | 204000 | ----- | | | | 120 | 204000 |
| 14 | տնտեսող լամպեր | հատ | 1750 | 120 | 21000 | | | -- | -- | 120 | 210000 |
| 15 | տնտեսող լամպեր | հատ | 2000 | 120 | -- | 120 | 240000 | -- | -- | 120 | 240000 |
| 17 | Զուգարանի մաքրման նյութեր | հատ | 1100 | 22 | 24200 | | | | | 22 | 24200 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | Զուգարանի մաքրման նյութեր | հատ | 740 | 20 | 14800 | -- | -- | -- | -- | 20 | 14800 |
| 19 | Հատակի մաքրելու նյութեր | հատ | 2400 | 25 | 60000 | -- | -- | -- | -- | 25 | 60000 |
| 20 | Աղտահանող միջոց սանհանգույցի համար(խտանյութ) | հատ | 850 | -- | -- | -- | -- | 21 | 17850 | 21 | 17850 |
| 21 | Կահույքի փայլեցնող միջոց | հատ | 650 | -- | -- | -- | -- | 24 | 15600 | 24 | 15600 |
| 22 | խտազերծիչ օդի | Հատ | 585 | 70 | 40950 | -- | -- | -- | -- | -- | 40950 |
| 23 | Մաքրող կտորներ | Հատ | 610 | 30 | -- | -- | -- | 30 | 18300 | 30 | 18300 |
| 24 | Փոշու հավաքման կտորներ | հատ | 185 | 100 | -- | -- | -- | 100 | 18500 | 100 | 18500 |
| 25 | Մեկուսիչ ժապավեն՝ օղակաձև | հատ | 150 | 19 | 2850 | -- | -- | -- | -- | 19 | 2850 |
| 26 | Պոլիէթիլենային պարկ՝ աղբի համար | հատ | 9 | 1000 | 9000 | -- | -- | -- | | 1000 | 9000 |
| 28 | Մարտկոց AAA տեսակի | հատ | 100 | 109 | 10900 | -- | -- | -- | -- | 109 | 10900 |
| 30 | սպունգ | հատ | 710 | 20 | -- | -- | -- | 20 | 14200 | 20 | 14200 |
| 31 | ավել,սովորական | հատ | 690 | 15 | -- | -- | -- | 15 | 10350 | 15 | 10350 |
| 32 | ձեռքի գործիքներ | հատ | 1925 | 16 | -- | -- | -- | 16 | 30800 | 16 | 30800 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 668340 | | 506000 | | 241250 | | 1415590 |

ԳՆՈՐԴ

ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան 19
ԿԳ գործառնական վարչություն
հ/հ 900011545069
ՀՀՎՀՀ 00067508
Աշխատակազմի ղեկավար

Ա. Ներսիսյան

---------------------------

/ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ

<< Հաղթանակ 2000>> ՍՊԸ
Ք.Երևան,Անդրանիկի 4/8
ՀՎՀՀ 00832885
<< Կոնվերս բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 19300 4674001

Տնօրեն Ա. Դանիելյան

/ստորագրություն/

Հավելված N 3
21.04.2017 թ. կնքված
ՀՀ-Գ-ԷԱՃԱՊՁԲ-17/11 ծածկագրով գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 20 17 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | տնտեսական ապրանքներ և կենցաղային նյութեր | 668340 | 668340 | 117434<br>0 | 117434<br>0 | 117434<br>0 | 1415590 | 141559<br>0 | 141559<br>0 | 141559 |

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

### ԳՆՈՐԴ

ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան 19
ԿԳ գործառնական վարչություն
հ/հ 900011545069
ՀՀՎՀՀ 00061508
Աշխատակազմի ղեկավար

Ա. Ներսիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

### ՎԱՃԱՌՈՂ

<< Հաղթանակ 2000>> ՍՊԸ
Ք.Երևան,Անդրանիկի 4/8
ՀՎՀՀ 00832885
<< Կոնվերս բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 19300 4674001
Տնօրեն Ա.Դանիելյան

(ստորագրություն)
Կ.Տ.

<< >> << >> 20 թ. կնքված
N ________________ *ծածկագրով գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________

______________________

գտնվելու վայրը ____________
հհ ______________________

______________________

հվհհ ____________________

Պատվիրատու

______________________

______________________

գտնվելու վայրը ____________
հհ______________________

______________________

հվհհ____________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________

______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 4.1
<< >> << >> 20 թ. կնքված
N ________________ *ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

## պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ------------------------------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
---------------------------------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N -------------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ----------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն